# ՊԱՏՄԱԲԱՆԸ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ

Վ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

*Նոր շրջանի պատմագիտության զարգացումը մեր հանրապետությունում անխզելիորեն կապված է մեծանուն պատմաբան և գիտության խոշոր կազմակերպիչ ակադեմիկոս Մկրտիչ Գեզամի Ներսիսյանի անվան հետ, որը ոչ միայն խոր հետք թողեց հայ ժողովրդի նոր դարի պատմության ուսումնասիրության բնագավառում, այլև նշանակալից ավանդ ներդրեց հայագիտության և արևելագիտության զարգացման գործում: Մ. Գ. Ներսիսյանը, ի տարբերություն այլոց, չբավարարվեց լոկ գիտական մնայուն աշխատությունների ստեղծմամբ, որոնք հիրավի հարստացրին խորհրդահայ և խորհրդային պատմագիտության շտեմարանը, այլև ստեղծագործական կյանքի լավագույն տարիներին միաժամանակ իր ուժերի զգալի մասը նվիրաբերեց գիտակազմակերպչական աշխատանքներին, որոնց շնորհիվ հայագիտական և արևելագիտական ուսումնասիրությունները Հայաստանում դրվեցին միանգամայն նոր և ամուր հիմքերի վրա:*

*Չնայած բազմապիսի խոչընդոտներին, Մ. Գ. Ներսիսյանն ստեղծեց մի շարք հիմնարար աշխատություններ՝ նվիրված նոր դարի պատմության ամենակնճռոտ հարցերին: Նա առաջինը գիտական վերլուծության ենթարկեց ազգային-ազատագրական շարժումների պատմությունն Արևմտյան Հայաստանում XIX դարի 50-70-ական թվականներին: Շատ ավելի մեծ խիզախում էր կատարյալ լռության մատնված և խնամքով շրջանցված հայերի ցեղասպանության պատմության ուսումնասիրությունը: Տարիների տքնաջան աշխատանքը նախկին ԽՍՀՄ կենտրոնական և հանրապետական արխիվներում, հնարավորություն ընձեռեց նրան խորհրդային պատմագրության մեջ առաջին անգամ 1966 թ. հրատարակելու փաստաթղթերի մի հարուստ ժողովածու՝ նվիրված հայերի ցեղասպանությանը 1880-ական թթ. մինչև 1919 թ. ընդգրկող ժամանակաշրջանում: Հրապարակված աղբյուրների հարստության և բազմազանության տեսակետից այն ոչ միայն եզակի երևույթ էր հայ պատմագրության ոլորտում, այլև իր ուրույն տեղն ունի այս խնդրին նվիրված արտասահմանյան բազմաթիվ գիտական հրատարակությունների շարքում: Դրանով իսկ ակադեմիկոս Ներսիսյանը պատմական գիտության այդ մարզում դարձավ գիտական ուսումնասիրությունների հիմնադիրը Հայաստանում:*

Մ. Գ. Ներսիսյանին բնորոշ են պատմական աղբյուրների մանրաղնին քննությունը և պրոբլեմի նկատմամբ ցուցաբերվող համակողմանի մոտեցումը՝ բազմապիսի խնդիրների ընդգրկման լայն շառավիղով: Մասնագիտական թեմաների ուսումնասիրության առանձնահատկությունների բերումով, նա իր գիտական գործունեության մեծ մասն անց էր կացրել խորհրդային զանազան կենտրոնական արխիվներում, որոնցում հայանաբերված նյութերը դարձել էին նրա գիտական աշխատանքների ամուր ատաղձը: Այսօր սոսկ հպանցիկ ծանոթությունն իսկ նրա մենագրությունների աղբյուրագիտական հենքի հետ ապշեցնում է օգտագործված սկզբնաղբյուրների և, մասնավորապես, արխիվային փաստաթղթերի բազմազանությամբ, որոնք առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել նրա կողմից:

Թե՛ իր, թե՛ գործընկերների (այդ թվում և կրտսեր սերնդի ներկայացուցիչների) նկատմամբ դրսևորվող ամենօրյա ծայրահեղ պահանջկոտությունը Մ. Գ. Ներսիսյանի անվանը հավելել էին մաքսիմալիստի պատվավոր համբավը: Այդ իրողությունը պայմանավորված էր ոչ միայն նրա բնավորության առանձնահատկություններով և առաջին հերթին խստապահանջությամբ, այլև պատմագիտական աշխատառճով: Մ. Գ. Ներսիսյանը չէր բավարարվում միջին արդյունքներով և չէր ընդունում պատմագիտական թեմաներով լույս ընծայված այնպիսի աշխատությունների նշանակությունը, որոնց հեղինակներն ամբողջությամբ չէին օգտագործել տվյալ թեմային առնչվող սկզբնաղբյուրները, մասնավորապես արխիվային վավերագրերը:

Մ. Գ. Ներսիսյանի գործընկերներին զարմացնում էր նրա նախանձելի աշխատասիրությունը, որը, որքան էլ տարօրինակ թվա, ամենևին չէր նվազում անդամ նրա կյանքի վերջին տարիներին: Չնայած պատկառելի տարիքին, նա պարբերաբար գիտական գործուղումների էր մեկնում Մոսկվա: 1982-1984 թթ., Կիսլովոդսկում հանդստանալուց հետո, նա մեկ ամսով ժամանում էր Մոսկվա տեղի դրադարաններում աշխատելու համար: Հաջորդ օրն արդեն կարելի էր նրան տեսնել Ռուսական պետական գրադարանում, որը ոչ հեռավոր անցյալում կրում էր Լենինի անունը: Անկախ մոսկովյան եղանակի քմահաճույքներից, Մ. Գ. Ներսիսյանն այնուամենայնիվ ամեն օր այցելում էր գրադարան, ուր ժամեր շարունակ հակված էր մնում ընթերցողների N 1 ընթերցասրահի գրասեղաններից մեկին:

Մ. Գ. Ներսիսյանի արտակարգ բարեխղճությունը և բծախնդրությունը, որոնք ներդաշնակորեն զուգակցվում էին նրա աշխատասիրության հետ, ամբողջությամբ բացառում էին անհարկի շտապողականության դրսևորումները նրա գիտական պրակտիկայում: Նրա աշխատանքային «խոհանոցում» առանձնահատուկ տեղ էր գրավում սկզբնաղբյուրների հետ տարվող մանրազնին, երկարատև աշխատանքը:

Նա բազմիցս ափսոսանքով էր խոսում այն մասին, որ իր ուսումնառության տարիները խիստ անբարենպաստ էին եղել օտար լեզուներին հիմնավորապես տիրապետելու համար: Այդուհանդերձ, նա երբևէ չէր շրջանցում օտար լեզուներով առկա սկզբնաղբյուրները: Աղբյուրների արժանահավատության հարցում կատարելապես հավաստիանալուց հետո միայն նա հենվում էր դրանց վրա, կամ ձեռնամուխ լինում դրանց հրապարակմանը այս կամ այն ժողովածուներում:

Այլազգի պատմաբանների շրջանում Մ. Գ. Ներսիսյանի համար կային եզակի հեղինակություններ: Դրանց թվում էին մասնավորապես ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինան և պրոֆեսոր Ա. Զ. Մանֆրեդը: Սակայն, Մ. Գ. Ներսիսյանը երբևէ չէր խուսափում քննադատական խոսքեր ուղղելուց ոչ միայն խորհրդային, այլև համաշխարհային պատմագրության ասպարեզում մեծ հեղինակություն վայելող Մ. Վ. Նեչկինայի հասցեին: Մ. Վ. Նեչկինային նա քննադատում էր դեկաբրիստական շարժման պատմության մի շարք նեղ մասնագիտական, բայց սկզբունքային հարցերում: Մ. Գ. Ներսիսյանն անհիմն էր համարում վերջինիս այն վարկածը, համաձայն որի իբր հիմքեր կան ենթադրելու, թե դեկաբրիստները Կովկասում ունեցել են գաղտնի ընկերության մասնաճյուղեր: Հենվելով հատկապես արխիվային վավերագրերի տվյալների վրա, նա մերժում էր այդ, ցավով նշելով, որ Մ. Վ. Նեչկինայի հետքերով, այդ թյուր տեսակետին հետևում են նաև որոշ խորհրդահայ պատմաբաններ: Միաժամանակ նա համամիտ չէր Մ. Վ. Նեչկինայի հետ դեկաբրիստների գործունեությունը դերագնահատելու հարցում: Բայց եթե հաշվի առնենք, թե ինչպիսի անկեղծ սիրով և համակրանքով էր նա վերաբերվում դեկաբրիստներին, որոնց գործունեության ուսումնասիրությանը նվիրաբերել էր իր կյանքի լավագույն տարիները, ապա պարզ կդառնա, որ ամեն մի պատմաբան չէ, որ նման պայմաններում կարող է խույս տալ «իր հերոսներին» դերագնահատելու գայթակղությունից:

Ակադեմիկոս Ներսիսյանը սկզբունքային էր և անզիջում: Պատմական գիտության հանդեպ տածած պատասխանատվության բարձր զգացման բերումով, նա անհողդողդ պայքարում էր Հայաստանում, հատկապես վերջին տարիներին, լայն տարածում գտած դիլետանտիզմի տարբեր դրսևորումների դեմ: Նա իրավամբ գտնում էր, որ պատմական գիտության յուրաքանչյուր ասպարեզում վերջնական խոսքին հավակնելու իրավունքը պատկանում է միայն մասնագիտական հատուկ պատրաստվածություն ունեցող պատմաբանին: Որոշ բանասերների, գրողների և քաղաքական գործիչների կողմից պատմական գիտության նկատմամբ դրսևորվող անպատասխանատու մոտեցումը Մ. Գ. Ներսիսյանը որակում էր ոչ միայն իբրև հակագիտական, այլև վնասակար, որը հղի էր սեփական ժողովրդին ապակողմնորոշելու տխուր հեռանկարով: Միաժամանակ նա ցավով էր խոսում

այն մասին, որ նման նկրտումները ոչ բոլոր պատմաբանների կողմից էին արժանի հակահարված ստանում:

Ելնելով իր գիտական համոզմունքներից, որոնք բխում էին պատմական անցյալի անկողմնակալ մեկնաբանության անհրաժեշտությունից, Մ. Գ. Ներսիսյանը տարբեր միջավայրերում տեղի ունեցող գիտական քննարկումների ժամանակ, նույնիսկ կյանքի վերջին տարիներին, անզիջում պայքարում էր հանուն ստուգապատում պատմագիտության վերջնական հաղթանակի: Ովքեր երկար տարիներ Մ. Գ. Ներսիսյանի հետ կողք-կողքի աշխատելու հնարավորությունն են ունեցել, կարող են անվերապահորեն հավաստել մի անառարկելի իրողություն. կասկածից վեր է, որ նրան բնորոշ էին համեստությունը և այլ պատմաբանների, այդ թվում սկսնակ գիտաշխատողների կարծիքների հանգեպ հարգալից վերաբերմունքի դրսևորումը:

Բաժնի նիստերի, ինչպես նաև տարբեր քննարկումների ժամանակ, նա միշտ հաշվի էր առնում ներկաների կարծիքները, և միշտ չէ, որ խնդրո առարկա հարցերին նվիրված քննարկումների ավարտից հետո ընթացք էր տալիս հարցի լուծման իր տարբերակին: Սակավ չէին այնպիսի դեպքերը, երբ նա, նկատի ունենալով իր աշխատակիցների մոտեցումները, կայացնում էր այնպիսի վերջնական որոշումներ, որոնք սրբագրում էին իր կողմից առաջ քաշված նախնական տեսակետները:

Բանավիճային հարցերի շուրջ նրա դիրքորոշումը միանշանակ էր. հենվելով ակադեմիկոս Մանանդյանի օրինակի վրա, նա հաճույքով ընդգծում էր. «Ելույթի ժամանակ պետք չէ կատեգորիկ հայտարարություններ անել: Հարկ է, որ փաստերը խոսեն իրենց մասին: Մանանդյանը միշտ նշում էր՝ կարելի է կարծել...»:

Համեստությունը այն առաջնային հատկանիշներից էր, որ Մ. Գ. Ներսիսյանն անմիջապես կանխազգում էր իր շրջապատում գտնվող գործընկերների շրջանում և առհասարակ բոլոր նրանց մոտ, ում հետ իրերի բերումով, գուցեև կարճատև շփումների առիթն էր ունենում: Որոշ երիտասարդ գիտաշխատողների՝ իրենց իբրև հասուն «գիտնականների» մասին արվող ամբարտավան հայտարարությունների առթիվ, նա սովորաբար բերում էր ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի օրինակը. «Նախագահը երբեք չի խոսում իր՝ իբրև գիտնականի մասին, այլ միշտ նշում է, որ ինքը գիտաշխատող է»:

Մ. Գ. Ներսիսյանին շատերից որոշակիորեն զանազանում էր ևս մեկ էական հանգամանք. գիտական հետաքրքրությունները կենտրոնացնելով հայ ժողովրդի պատմական անցյալի վերհանման վրա, նա այդուհանդերձ արդար չէր դտնում ազգությամբ հայ պատմաբանի համար սոսկ ազգային պատմության նեղ շրջանակներում պարփակվելը: Մ. Գ. Ներսիսյանը կտրականապես մերժում էր պատմական գիտության ասպարեզում սահմանափակվածության դրսևորումները, որոնք սակայն ոմանք դիտում են իբրև հայրենասիրության առհավատչյա: Ելնելով արդի ժամանակաշրջանում

պատմական գիտության կողմից առաջադրվող պահանջներից, Մ. Գ. Ներսիսյանը գտնում էր, որ հայ ժողովրդի պատմության խնդիրների շուրջ արժեքավոր և մնայուն ուսումնասիրություններ կարող է ստեղծել միայն այն պատմաբանը, որն իրազեկ է թե՛ ռուսական, թե՛ համաշխարհային պատմագիտական թատերաբեմերում ընթացող տեղաշարժերին, արևմտյան և ամերիկյան պատմագրության նորագույն նվաճումներին:

Մ. Գ. Ներսիսյանն այն եզակի խորհրդահայ պատմաբաններից էր, որը վճռականորեն հատելով բոլոր «ռուբիկոնները» բազմիցս դուրս եկավ հայ ժողովրդի պատմությանն առնչվող խնդիրների ուսումնասիրության սահմաններից և ուշագրավ հետազոտություններ նվիրեց դիկաբրիստական շարժման, 1812 թ. հայրենական պատերազմի պատմության այլևայլ հարցերին: Այս առթիվ հարկ է նշել, որ ԽՍՀՄ ժողովուրդների պատմության, դեկաբրիստների գործունեության ուսումնասիրության ասպարեզում նրա ավանդը բարձր է գնահատվել խորհրդային բազմաթիվ պատմաբանների, այդ թվում Մ. Վ. Նեչկինայի կողմից: Մ. Գ. Ներսիսյանին հղված 1976 թ. փետրվարի 19-ի թվակիր նամակում ակադեմիկոս Նեչկինան նրա «Դեկաբրիստները Հայաստանում» մենագրության ռուսերեն թարգմանության առթիվ գրում էր.

«Մեծարգո Մկրտիչ Գեզամովիչ.

Սրտանց շնորհակալ եմ ձեզ հրաշալի նվերի՝ «Դեկաբրիստները Հայաստանում» ձեր հիանալի գրքի համար, որն այդքան բազմակողմանիորեն լուսաբանում է հարցը: Այդ գրքի կարիքը շատ մեծ էր: Շնորհավորում եմ ձեզ դրա լույս ընծայման կապակցությամբ:

Ողջույն!

Մ. Նեչկինա»:

Սովորաբար պատմաբանների մեծամասնությանը հատուկ է մի թուլություն: Գրեթե ամեն մի պատմաբան հակում ունի գերագնահատելու իր կողմից ուսումնասիրվող գիտական պրոբլեմների նշանակությունը, կամ իդեալականացնելու պատմական այն դարաշրջանը, որի հետազոտությանը նվիրաբերել է դիտական կյանքը: Մ. Գ. Ներսիսյանին սակայն հատուկ էր այլ մոտեցում:

Տասնամյակներ շարունակ նոր դարի պատմության հիմնահարցերը վեր հանած պատմաբանի հետաքրքրությունը չէր նվազում հին և միջնադարյան պատմության հարցերի հանդեպ: Նման դիրքորոշումը պայմանավորված էր Մ. Գ. Ներսիսյանի կողմից՝ պատմական անցյալի իրադարձությունները հնարավորության սահմաններում առավելագույն չափով անկողմնակալ ձևով մեկնաբանելու անվարան և հետևողական ձգտումով: Համաձայն նրա կարծիքի, հին աշխարհի և միջին դարերի պատմության ուսումնասիրությունը շատ ավելի լայն հնարավորություններ է ընձեռում պատմաբանին՝ իր կոչմանն ըստ արժանվույն ծառայելու գործում:

Այսպիսին էր, ընդհանուր գծերով, Ներսիսյան պատմաբանի գիտական նկարագիրը, որի՝ պատմական գիտության նկատմամբ ունեցած հայացքները, պատմաբաններին ներկայացվող պահանջները, խիստ ուսանելի են շատ շատերի, մասնավորապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչների համար:

Մ. Գ. Ներսիսյանը քաղաքացիական բարձր դիմագծի տեր մտավորական էր: «Ես այնքան եմ զբաղվել դեկաբրիստների գործունեությամբ,– հաճախակի կրկնում էր նա,– որ մտածում եմ հիմնականում ժողովրդի վիճակի մասին»:

Մ. Գ. Ներսիսյանին բնորոշ էին մարդկային բարձր հատկանիշներ, ինչպիսիք են ազնվությունը, անմիջականությունը: Հատկապես հարկ է ընդգծել նրա ուղղամտությունը: Անկախ այն բանից, ղեկուցակցի համար հաճելի էր թե ոչ իմանալ նրա կարծիքը որևէ հարցում, Մ. Գ. Ներսիսյանը միշտ ասում էր այն, ինչ մտածում էր:

Իր շրջապատի նկատմամբ Մ. Գ. Ներսիսյանը ցուցաբերում էր հոդատար վերաբերմունք, բազմիցս օժանդակում մարդկանց նյութապես: Նա միշտ պատրաստ էր խորհուրդներով օգնելու երիտասարդ պատմաբաններին, ընթերցելու նրանց հոդվածները, կողմնորոշելու գիտական թեմաների ճիշտ ընտրության հարցում:

Բնությունը, հարկավ, զարգացման իր օրինաչափություններն ունի, որոնք նույնքան անշրջանցելի, որքան և անողոք են բոլոր մահկանացուների, այդ թվում և մեծ գիտնականների համար: Այսօր, երբ բոլորովին վերջերս է մեզ հրաժեշտ տվել վաստակաշատ պատմաբանը, դեռևս վաղ է ամբողջ խորությամբ ըմբռնելն իսկ կրած մեծ կորուստի նշանակությունը, որը սակայն չի հապաղի իրեն զդացնել տալ: